

# ՄՆԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարաբարբաբայի գիւմում են ուղղակի  
Тифлиса. Редакция „Мусако“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Կացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

## ՔՈՒՄԱՆՈՒԹԻՒՆ

Որքան հայր փոխվել է:—Ներքին տեսու-  
թիւնը համակ զինվածուց: համակ խմբագրին:  
Ներքին լուրերը:—Արտաքին տեսու-  
թիւնը: Բարձրագույն: համակ Պարսկաստանից  
Արտաքին լուրերը:—Սերալիկո հեռագիրները:—  
Յայտարարութիւնները:—Տեղեկացուց:—Բանաստի-  
ւարական հակա ազգային:

## ՈՐԳԱՆ ՀԱՅՐ ՓՈՒՍԼ ԵՒ

Պատմութեան ընթացքում,  
այս կամ այն հանգամանքների  
չնորհով մի ազգի բնատրու-  
թիւնը փոխվում է:

Այդպէս է փոխվել և հայի  
բնատրութիւնը դարերի ընթաց-  
քում: Իր ամբողջ պատմութեան  
մէջ հայը յայտնի էր որպէս համ-  
բերող կրօնի ազատութիւնը սի-  
րող: հաւատի ազատութեան  
պաշտպան ազգութիւնը...

Այժմ հայը փոխվել է: Որ  
ժամանակից է սկսվում հայի այդ  
բարոյական կերպարանափոխու-  
թիւնը,—գժուար է ճշգրտութեամբ  
ասել Մի բան անհերքելի է միայն,  
որ կրօնի ազատութեան, հաւատ-  
ների հաւասարութեան պաշտպան

ազգութիւնը դարձել է մոլեռանդ  
և անհամբերող դէպի ուրիշ հա-  
ւատ, դէպի ուրիշ կրօնը: Այդ  
յատկութիւնը նշմարելի է այժմ  
ոչ թէ միայն հայ անկիրթ ամ-  
բոխի մէջ, բայց մեր ազգի ինտե-  
լեկտնայի մէջ...

Ինտելեկտնային պատկանող  
հայերը հաւատացնում են ամբո-  
խին որ հայ-կաթօլիկը և հայ-  
բողոքականը հայեր չեն, որ նրանք  
ընդունելով ուրիշ կրօն, կտրեցին  
իրանց կապերը հայոց ազգի ան-  
ցեալ պատմութեան հետ, քաջա-  
լերում են ամբոխին, գրով և խոս-  
քով, մոլեռանդութեամբ վերա-  
բերվել դէպի իրանց այլազաւան  
եղբայրները:

Եթէ կաթօլիկ և բողոքական  
հայերը իրանց հայ չեն համարում,  
ատում են հայ-լուսաւորչականնե-  
րին, դորա մէջ զխաւորապէս  
մենք, հայ-լուսաւորչականներս ենք  
մեղաւոր, որովհետև հայ-լուսա-  
ւորչականների մեծամասնութիւնը  
անինայ է հալածել այն ամեն  
հայերին, որոնք իրանց երակների  
մէջ հայ արին ունեւոր, համար-

ձակվել են մի որ և է ուրիշ դա-  
ւանութեան պատկանել: Հայ-լու-  
սաւորչականը երբէք մազի չափ  
չէ հալածել այն հայերին, որոնք  
մնալով լուսաւորչական կրօնի, մի  
և նոյն ժամանակ ուրանում էին  
իրանց ազգութիւնը, մոռանում  
և արհամարհում էին իրանց մայ-  
րենի լեզուն... Դորանով հայերը  
միշտ ապացուցել են, որ իրանք  
իրանց ազգութիւն չեն համարում,  
այլ համարում են իրանց մի ա-  
զանդ, մի սէկտա...

Այդ բաւական չէ երբ կա-  
թօլիկ, կամ բողոքական հայը,  
անտես աւանդով, համբերելով հայ  
լուսաւորչականներից կրած բոլոր  
հալածանքները, ազգութեամբ իրան  
դարձեալ հայ համարելով ներկայա-  
նում էր հայոց ծխական կամ միջ-  
նակարգ դպրոցի վարչութեանը,  
ձեռքին առած մի մանուկ, խըն-  
դրում, աղաչում էր որ դպրոցը  
ընդունի իր զաւակին,—հայ-լու-  
սաւորչականը փակում էր իր  
ազգային դպրոցի դռները հայ-  
կաթօլիկ, կամ հայ բողոքական  
մանուկի առջև:

Այդ կատարվում էր ոչ թէ  
մի տաս, քսան տարի առաջ, այլ  
կատարվում է և այժմ: և այդ  
կատարում են ոչ թէ գաւառա-  
կան մի որ և է անյայտ քաղաքի  
հայերը միայն, այլ Անդրկովկասի  
մայրաքաղաքի, Թիֆլիսի հայոց  
ծխական և միջնակարգ արական  
և իզական դպրոցների եւրոպա-  
կիրթ տեսուչները և լուսաւորված  
հոգաբարձուները այդպէս են վե-  
րաբերվում դէպի իրանց կաթօլիկ  
և բողոքական եղբայրների մա-  
նուկները...

Մերժել հայ մանուկին դպրոցի  
մուտքը, միջոց չը տալ նրան սո-  
վորել իր մայրենի լեզուն,—դա  
համարվում է մեր ինտելեկտնայի  
կողմից մի ազգասիրական գործ...

Փոխանակ աշխատելու ներքին  
բարոյական կապեր հաստատելու  
այլ և այլ դաւանութիւններին  
պատկանող հայ մանուկների մէջ,  
—մեր մանկավարժները և մեր դըպ-  
րոցական վարչութիւնները իրանց  
վարմունքով թշնամութեան սեր-  
մեր են սերմանում արիւնակից  
եղբայրների մէջ:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բարձրացող շրջանից, որը եւի էր զայն սեղանի  
միտ: Ինքը Միքայէլը անում էր գաւաթները և  
մատուցանում էր իր հիւրերին:  
—Ինչ որ ուզում ես, ասա, քեզ մօտ միշտ  
տխուր է լինում, ասաց Միքայէլին հիւրերից  
մէկը:  
—Ինչու, հարցրուց նա ժպտելով:  
—Երա համար որ, ոչ կարող կայ, ոչ նարդի,  
կայ, մի խօսքով խաղալու ոչինչ չը կայ:  
—Խաղացէք, ձեզ ո՞վ է արգելում:  
—Ինչպէս խաղանք, երբ դու չես խաղում:  
—Ես էլ կը մտնակցեմ:  
—Փողով:—Մենք առանց փողի չենք խաղում:  
—Եւ մեծ փողով, մէջ մտաւ հիւրերից մի ու-  
րիշը:  
—Ինչու անպատճառ մեծ փողով, երբ ժամա-  
նակ անցկացնելու համար էր, պատասխանեց  
Միքայէլը:  
—Ժամանակ անցկացնելու ոչին է, խօսեց առա-  
ջինը արհամարհանքով:—մեզ մօտ ամեն զիշոր  
հազարներ են խաղում:  
Դուռը բաց եղաւ, խօսակցութիւնը ընդհատվե-  
ցաւ: Մի պատանի, կանգնած չէկէր վրա, ձայն  
տուեց իր ընկերներին:—Մտէք, նրանք շատ են  
այստեղ... Վերջապէս գտանք...

Երբ մտան երեք ուսանողներ: Նրանցից մէկը  
զրկեց սեղանի վրա մի թիւրթ թուղթ, և դառնա-  
լով դէպի Միքայէլի հիւրերը, խօսեց ճառական  
եղանակով:  
—Պարոններ, այդ նուիրաւորութիւնը մի այն-  
պիսի բարի նպատակի համար է, որ ամեն մի հայ,  
որի սրտումը մտացել էր զգայմունքի մի կաթիլ  
անգամ դէպի տաճկաստանցի մեր եղբայրները,  
դէպի նրանց կրած հարստահարութիւնները ու  
տառապանքը, չի պիտի զլանայ իր օժանդակու-  
թիւնը: Աստի խնդրում եմ, ձեզանից ամեն մէկը,  
որքան կարող է, թող ստորագրէ:  
Կարծես, վաճառականների զլխին սառն ջուր  
ածեցին:

—Ե՛հ, զարկայ տարան իրանց ստորագրութիւն-  
ներով... ասաց նրանցից մէկը զուլքը մի կողմ  
չընկելով:  
—Մենք ուր... տաճկաստանցին ուր... խօսեց  
միւսը արհամարհանքով:—մեր երկխոսքի դարձը  
չենք կարողանում քաշել:  
—Ինչ բանի համար է ստորագրութիւնը, հարց-  
րեց մի ուրիշը կասկածաւոր կերպով:  
Ուսանողները մտացին շուտաւ:  
—Մի և նոյն է ձեզ, թէ ինչ բանի համար է,  
պատասխանեց նրանցից մէկը վշտացած ձայնով:—  
բայց քանի որ դուք այսպէս սառն կերպով ըն-  
դունցիք մեր առաջարկութիւնը, կարծեմ, հար-  
կաւոր էլ չէ, որ իմանաք, թէ ինչ բանի համար է  
Միքայէլը ոչինչ չը խօսեց. նրան յայտնի էր իր  
հիւրերի անտարբերութիւնը:  
Ուսանողները հեռացան, Միքայէլը դնաց նրանց  
ճանապարհ գցելու:  
—Ահա մեր դրամատէրները—մեր նիւթական  
զորութիւնը—ինչ կարելի է յուսալ այդ անսիրտ  
դիակներից... ասաց ուսանողներից մէկը:  
—Փո՛ւ, կրողը տանէ ձեզ...  
Նրանք հասան անսրտաբաններին, որ ցած էր  
տանում դէպի տան զլխաւոր մուտքը: Այնտեղ  
Միքայէլը հարցրեց:  
Ինչ նպատակի համար է ստորագրութիւնը:  
Ուսանողները մտածութեան մէջ ընկան, և բո-  
ւայական լուսութիւնից յետոյ նրանցից մէկը պա-  
տասխանեց:  
—Կա մի գաղտնիք է... բայց ձեզից ծածկել  
պէտք չէ... դուք մերն էք... Կիտէք, որ Կ. Պոլսի  
պատրիարքի նուիրականից մէկը արդէն գտան-  
վում է Պետերբուրգում, իսկ միւսը Լժնոյնում:  
Տաճկաստանի հայոց խնդիրը մի մաղից է կախված.  
զործիր ժամանակ է, մենք պատրաստում ենք մի  
երկտասարդ արտասահման ուղարկելու համար,  
որ այնտեղ պրօպագանդա անէ մամուլի միջոցով:  
Միքայէլը դէմքը ընդունեց խիստ ուրախ ար-  
տայայտութիւն:

—Կա շատ գեղեցիկ միտք է, ասաց նա:—Ո՞վ  
է դնացողը:  
—Չեր բարեկամը, պ. Ս. Մատիսեանը:  
—Չարմանում եմ, որ նա այդ մասին ինձ ոչինչ  
չէ յայտնել:  
—Նա չափազանց ծածկամիտ մարդ է: Նա  
ցանկանում էր, որ դուք գիտենայիք յետոյ, երբ  
ինքը դնացած կը լինէր:  
—Այդ մի և նոյն է, խօսեց Միքայէլը,—ասե-  
ցէք Ստեփանին թող ինձ մօտ մտնէ, ես կը  
կարգադրեմ, ինչ որ պէտք է նրա ճանապարհոր-  
դութեան համար: Ուսանողները սեղմեցին Միքա-  
յէլի ձեռքը և հեռացան: Վերադառնալով իր հիւ-  
րերի մօտ, Միքայէլը նրանց ոչինչ չը յայտնեց,  
բայց շատ վրդովվեցաւ, երբ նկատեց, որ նրանք  
տակալին ծաղրում էին ուսանողներին, և տակա-  
լին պախարակում էին նրանց վարմունքը:  
—Երեկ, Չիբուրի խարչուլը պաճի է, ասում  
էր մէկը:  
—Իրանք քաղցած մեռնում են, բայց տաճկա-  
ստանցիների դարձն են քաշում, ասում էր միւսը:  
—Ախար հանգստութիւն չունենք այդ մուրաց-  
կանների ձեռքից, խօսեց մի ուրիշը:—քանի որ  
առաջ մօտեցնում են մի թիւրթ, ատորագրեցէք  
մի բան, ասում են, յօդուաւ Աղաչկերտի դաղթա-  
կաններին:—Նէնց որ լսեցի, իծաներս հաւաքի-  
ցան, բերանս բաց արեցի, ասո, հեռացէք, ասեցի,  
ձեր էլ... պաշտպանեցու էլ...

Մի գիշեր Միքայէլի փոքրիկ սենեակը սովորա-  
կանից աւելի կենդանացած էր, հաւաքված էին մի-  
քանի երիտասարդ վաճառականներ, ծխում էին  
և խօսում էին: Ճրագի աղօտ շառակոյնների հա-  
զի լուսաւորում էին փոքրիկ սենեակի մասախու-  
ղը, որ թանձրացած էր ծխից և թէյի մեքենայից

Մի քանի րոպէս անց, խօսակցութիւնը ընդհատվե-  
ցաւ: Մի պատանի, կանգնած չէկէր վրա, ձայն  
տուեց իր ընկերներին:—Մտէք, նրանք շատ են  
այստեղ... Վերջապէս գտանք...

Մի քանի րոպէս անց, խօսակցութիւնը ընդհատվե-  
ցաւ: Մի պատանի, կանգնած չէկէր վրա, ձայն  
տուեց իր ընկերներին:—Մտէք, նրանք շատ են  
այստեղ... Վերջապէս գտանք...

Միքայէլը այլ ևս համբեր չը կարողացաւ:  
—Չէ կարելի այսպէս անդիտութեամբ վերաբեր-  
վել դէպի ազգային գործերը, ասաց նա վրդով-  
ված ձայնով: ազգի իւրաքանչիւր անդամը պար-  
տաւոր է իր կարողութեան չափով նպաստել  
ընդհանրութեանը, մենք փող ունենք, պէտք է  
փողով օգնենք նրանք (ուսանողները) խելք ու  
գիտութիւն ունեն, պէտք է խօսքով օգնեն մի  
ուրիշը սիրտ ունի, պէտք է զօրաւոր բազուկնե-  
րով օգնէ,—ամեն մի հայ իր ունեցածից չը պիտի  
խնայէ, և երբ բոլորը այսպէս կը վարվեն, այն

**Այդ և սրա նման անձուճու- թիւններ տեսնելով կամայակա- մայ յիշում ես Ներսէս Վ կաթո- ղիկութիւն: Գա մեր հոգեւորականու- թեան մէջ միակ մարդ էր որ ոչ թէ միայն խտրութիւն չէր դնում լու- սաւորչական, բողոքական և կա- թոլիկ հայերի մէջ, բայց և ամեն միջոցներով նպաստում էր որ հա- յոց դպրոցներում ընդունվեն այ- լազաւան հայերի մանուկները:**

**Ներկիւզ կարող ենք ասել որ հայոց ազգութեան պայութեան վերջին չորս թէ չհնազարդերի ընթացքում Ներսէս Վ-որդը միակ մեծ հոգեւորական էր, գուցէ և միակ մեծ մարդ էր, որ ար- զիւնաբերեց հայութիւնը:**

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԳԻԼԻՉԱՆԻՑ

10 օգոստոսի

Մամուլը գործերով եւ գտնվում էի Գիլիշան գիւղում:

Որպէս ինքնակոչ քննիչ եւ այցելելի անցնողի հոգեւոր հայ ուսումնարանին, բայց իմ բախտից վաղուց արդէն նախկին թեմական տեսուչ Ստե- փան ք. Տէր-Ստեփանեանը, նա էլ ինձ նման ան- կոչ հիւր, պարտք էր համարել ներկայանալու քնն- նութիւններին, ուր զարմացրել էր մեր գիտական հայրը Ց, 8 տարեկան աշակերտներին իր թուա- րանական ծանր խնդիրներով...

«Շատ գիտուն էր երևում...» ասում էին շատե- րը այդ խնդիրների շնորհով մեր տէր հօր համար: Ես ոչինչ չունեի նախանձեւութեամբ տէր հօր փառ- քին, քանի որ այդպիսի փառքեր որսալու մտքով չէր իմ այցելութիւնը...

Ժամանակ տաճկաստանցի հայը կարող կը վնի ազատ շունչ քաշել:

— Լաւ, լաւ, նրա խօսքը կարեց հիւրերից մէկը: — ազգային գործերը մի կողմ դրէք, մենք մեր բանի վրա մտածենք: Բերէք կարտերը:

— Ես, իրան ասեմ, այժմ խաղալու ամենինն ախորժակ չունեմ, պատասխանեց Միքայէլը:

— Այդ խօսքով կամենում էք ասել, թէ վեր կա- ցե՞ք և գնացե՞ք: Մենք այստեղ քարոզներ լսելու համար չենք եկել, խօսեց հիւրերից մէկը, կանդ- նակով:

— Եթէ իմ տունը ձեզ ձանձրացնում է, համե- ցե՞ք: ձեզ գտնով այստեղ ոչ ոք չի պահում:

Հիւրերը լռակցութեամբ հեռացան. մնացին նը- բանցից երկուսը միայն: Գրանք երկուստարք վա- ճառակահաններ էին, այն տեսակներից, որոնք թէև մի բան հասկանում են, բայց դեռ նաճապետա- կան պատկառանքով համարձակութիւն չունեն հակառակել իրանց հայտարարութիւնը, թէ և վեր- ջինների յայտնած միտքը բոլորովն սխալ կամ վը- նասակալը լինէր, և այս պատճառով բոլոր խօսակե- ցութեան ժամանակ նրանք լուռ էին: Բայց երբ մենակ մնացին Միքայէլը հետ, լեզուները բացվե- ցան:

— Այ, որքան մեռած, որքան անկարելից սըր- տեր ունեն այդ մարդիկը, ասաց նրանցից մէկը: — ոչինչ չէ գրաւում դրանց, ոչինչով չեն հետաքրքր- ւում, ինչ որ իրանց շահերի կամ իրանց գործերի ստանձանից դուրս էր: Ազգ, ազգակից և ընդհանուր մարդկութիւնը դրանց համար նշանակութիւն չու- նեն, երբ նրանցից որ և իցէ օգուտ չեն սպասում, և ամեն բանի վրա նայում են առեւտրական կե- սից:

Միքայէլը, որ նոյն բույնում խիստ գրգռված գրութեան մէջ էր գտնվում, վեր բարձրացաւ սանձանից դուրս էր: Ազգ, ազգակից էր, և բաւական տաք կերպով պատասխանեց:

— Գոնէ պարանը գիտենային, գոնէ օրինակու- րաւորականներ լինէին, բայց հաւատասցնում եմ

Ռուսացիքը, 300 տեղ 500 ր. պահանջելով, հե- ուացի էր քաղաք, իսկ պ. պ. հողաբարձուները, անհող եկող ուսումնական տարվայ համար ունե- նալիք ուսուցչի մասին, իրանց մասնաւոր գործերի ետեկցն էին ընկել:

Նաճապետական հայը միայն, իր նախնական սո- փոքութեան պէս չը զրացաւ ներկայանալ նորեկին: Նրանք պարտք են համարում զալ շնորհաւորել ձեր գալուստը, այլ և իմանալ... ձեր գալու պատճառը, ուր դնալը և մինչև անգամ ձեր նպատակները:

Գուր ի հարկէ իրաւունք չունէք ծածկելու այդ հարցերի պատասխանը, քանի որ այդ նրանց սուր պարտականութիւնն է:

Այդպիսիները մինը, Ներկարարնց Ա. ապերը, Գիլիշանի ծերունին, յայտնի է իր գեղեցկախօսու- թեամբ, իր առաջնորդ ու հեղաթիւններով:

«Գոնէ տարեկան կը լինէք», հարց եմ անում ես. — Ձր գիտեմ. թիւս գրած չի: — 10, 15 տարեկան կը լինէք ք: — Կարելի ա որ ըլնեմ, պատասխանում է մեր նայիւ ծերունին: Ես ծայրում եմ... — Եղ չէ, միայն երբ որ ես Մակուլը \* ) եկայ էս դէպը, Գիլիշան երեք տուն միայն կար. աւել- ցնում նա: «Ռուսնի դուք կը գիտենք թէ ինչու այս գիւ- ղի անունը Գիլիշան է կոչվում»: — Ինչ չէ: Նա սկսեց պատմել Նորդէս թէ այս կողմերում լինում է մի ազա Ստեփան, որ հիմնադրում է Գիլիշան գիւղը և ժողովրդով լցնում: Զրի պակա- սութեան պատճառով ազա Ստեփանը գնում է Ղարաբիսի և նրանց ահազին գետ բոլոր աղբիւ- րը ստիպանք կէս է անում, կէսը Գիլիշանի վրա չուս առնալ: Ժողովուրդը երախտաւոր աղայի ա- նունով միտքում է գետին և կոչում. «ազա Ստե- փան գետ», որ յետոյ ազաւորվելով դորձածական է դառնում Աղաստ և փ: Աղա Ստեփանը մի թուռ է ունենում Եղիշան անունով, որով և կոչում է իր նոր հիմնադրած գիւղը Գիլիշան: Վերջում Եղիշանի փոխանակ դործ է անվում Գիլիշան կամ Գիլիշան:

Թէ որքան ճշմարտութիւն կայ Ա. ապոր այս լէզնիցայում, ես այդ թողնում եմ հարցառելներին, այն կասեմ միայն, որ «ազատեա» անունը մեզ յայ- անի է պատմութիւնից: Աշտո Ներկալ հայ թագա- տորի ժամանակից (920 թ. Գ. յետոյ) իսկ «ազա» պատճառներ XII դարից, երբ մոնղոլները արշա- ւում են դէպի մեզ...

Գիլիշանը այն բազմաառու գիւղերից մէկն է, \* ) Մակու հայաբնակ գիւղ է Պարսկաստանի սահ- մանում:

ուր ամեն ջանք ու միջոց բերում է ոսկի վատակ: Աչքի ընկնելու բանը Գիլիշանում այն ուու- սական նորաձեւութիւնն է, որ վայրում է ամեն- քի վրա:

Կնամարդների կողմից հարուստ է Գիլիշանը. փոքրիկ ստաթիտիկան ինձ ցոյց տվեց, որ Գիլի- շանում իւրաքանչիւր այդ մարդին ընկնում է մի կին: — հասարակաց կնամարդներ մենք կը գտնենք մինի տեղ, շատերը... Գիլիշանից ես վերադառնում եմ Գարվան-Սա- րայ, որին ՎՇչակի մի յօդուածագիրը իրաւունքով Ղազարու գաւառի բեղիղէնցիա է անուանել: Այդ բեղիղէնցիայի մէջ թէ հեռու (չը գիտեմ) ա- սում են ապրանքներով լի ֆուրք օճիներ եւ պար- տակվիւ, այն էլ մի քահանայի և իր փեսայի ձեռքով... Ասում են որ այդպէս խտտովանում է և սրանք ծառան: Գործը ընկել է դատաստանի: Հեռուց երևում է այդ գիւղի փառահեղ ու- սումնարանի շինութիւնը, որի բարձր տանիքի վրա դեռ եւս ազաւանների պէս բանում են հիւանդեր: «Այս սեպտեմբերն էլ է մօտենում, էլ երբ պէտք է վերջացնէք շինութիւնը», հարց է անում մինը ուսումնարանի մշտ ա կան և խժող հո- դարարձուին: — Ես ինչ գիտեմ. անտէր մնա չիօն իր տիրոջ գլխին: «Բայց միթէ նա այնքան եկամտի աղբիւր չունի, որ լրացնի գոնէ շինութեան ծախքը, կամ յետ չաւաք տէր-Ղուկասից գոնէ աղւանները...» — Ո՞րտեղից ա աղբիւրը, Առաքել աղէն մի աղբիւր էր բերել գիւղը, էն էլ չիօն բախտիցը վաղուց ա ցամաքել- կարվել. պատասխանում է յարգելի հոգաբարձուն կարծելով թէ հարցանողը ջրի աղբիւրի մասին է խօսում... Աղւանների հարցը դեռ անցայտ է մնում... Ինչ ունենք սպասելու այդպիսի հոգաբարձու- ներից, քանի որ նրանց հասկացողութիւնը իրանց մարտից աւելի չէ անցում. բայց զարմանալին այն է որ գիւղը տանուտէր պ. Յովհան Ղազար- մեան և երեցիօն պ. Գեորգ Ասեղը գետն, որոնք սկզբում այնքան ջերմեանող էին ներդրու- ծում ուսումնարանի մասին, այժմ այդ պարուններն էլ են սառել... Գարձնում ենք նորընտիր թեմի տեսիլ ուշա- դրութիւնը այս հարցի վրա, աչքի առաջ ունե- նալով որ Գարվան-Սարայ ուսումնարանին է նայում ամբողջ մի գաւառը:

Էլի-Նա

**ՆԱՍՏԱԿ ԽՊԱՆԳՐԻՆ**

Բազու, 20 օգոստոսի

Գիտենալով, որ ամեն մի բարենպասակ գործի մէջ վերջին լուծայն անգամ ունի իր տեղը, իր նը- շանակութիւնը, այս պատճառով եւս աշխատեցի իմ ընկերական շրջանից ժողովել «Պարատեան» ընկերութեան օգտին. 61 բուրջ 50 կօպէկ: Այս գումարից 50 կօպ. վերցնելով, իբրև փօստի ծախք, մնացեալ 61 բուրջ անհ յարկում եմ ձեռ իրաւ. բազրութեանը և խնարում հասցնել սորան յիշեալ ընկերութեանը, հրատարակելով նուիրատուների անունները «Մշակի» մէջ:

Անն Նուիրատուների անունները.

Ղուկաս խաչատուրեանց 3 ր., Սամուէլ Համ- բարձուեանց 3 ր., Խահակ Պարոնեանց 3 ր., Ա- ւետիս Թէվանեանց 2 ր., Ղևոնդ Յակոբեանց 2 ր., Աստուածատուր Սերերականեանց 2 ր., Լ. Ս.—եանց 2 ր., Կարապետ Թումանեանց 2 ր., Յովսէփ Աղամալեանց 2 ր., Յովակիմ Մուրա- տեանց 1 ր., Նիկողայ Գանիէիեանց 1 ր., Յակոբ խաչատուրեանց 1 ր., Շերիի Կարապետեանց 1 ր., Ստեփան Այվազեանց 1 ր., Յովհաննէս Բայեանդուրեանց 1 ր., Յարութիւն Աստուածատուրեանց 1 ր., Չաքարեա Հայրուսեանց 1 ր., Արղուման Հայրապետեանց 1 ր., Խաչատուր Չաքարեանց 1 ր., Մկրտիչ Վանեանց 1 ր., Ստե- փան Մարտիրոսեանց 1 ր., Ենտիք Շահնազարեանց 1 ր., Յովհաննէս Գրիգորեանց 1 ր., Գրիգոր Բէ- ջանեանց 1 ր., Յովհաննէս Ստեփանեանց 1 ր., Մարտիրոս Տէր-Մատթէոսեանց 1 ր., Միքայէ Տէր-Պօղոսեանց 1 ր., Յարութիւն Կարապետեանց 1 ր., Խաչատուր Մելիք-Մուրատեանց 1 ր., Յա- կոբ խաչատուրեանց 1 ր., Աղեքանդր Պետրո- սեանց 1 ր., Ղազար Խահակեանց 1 ր., Անպապ ոմն 1 ր., Գեորգ Հայրուսեանց 1 ր., Թէոս Զհան- կիբեանց 1 ր., Աստուածատուր Թումանեանց 1 ր., Գրիգոր խաչատուրեանց 1 ր., Բողոքոս Շիլեանց 1 ր., Առաքել Աղաբաբեանց 1 ր., Գրիգոր Սա- րուխանեանց 1 ր., Ղարաման Մանուկեանց 1 ր., Յովհաննէս Մելիք-Շահնազարեանց 1 ր., Սիմէոն Ունանեանց 1 ր., Յովհաննէս Բէլլուքեանց 1 ր., Աւետիս Շամալեանց 50 կօպ., Յակոբ Ղահրամանեանց 50 ր., Նիկողայոս Սանարբէ- կեանց 50 ր., Սարգիս Արզէլեանց 50 ր., Միքայէ Ղազարեանց 50 ր., ընդամենը՝ 61 բուրջ:

Ղուկաս խ. խաչատուրեանց

ված է նա, աւելացնելով, թէ այդ կեղտը տարած- վում է ամբողջ հայ ազգի վրա, որովհետև օտա- րազգի մեզ ձանձուրում են վաճառականների երեսով, որոնք թափառում են երկրաշնչի ամեն կողմե- րում, և մի քանի անկախանների պատճառով վատ կարծիք է կազմում ամբողջ ազգի մասին, մինչդեռ նրա մեծամասնութիւնը, որ բողոքացած է արևե- տաւորներից և երկազգործներից, խիստ բարի և բարոյական մարդիկ են:

— Հիւստ տեսէք, ինչ բարիք կարելի է սպասել այդ փչացած և անբարոյականացած հասարակու- թիւնից, որի համար ոչինչ բան սուրբ չը կայ, ա- ւելացրեց նա, — և մենք զարմանում ենք, վրդով- վում ենք, երբ տեսնում ենք հայ վաճառականի անկարկեցութիւնը գէպի տաճկաստանի իրանց եղ- բայների տառապանքները մահաճատական թիւներ- քով:

Արդէն կէս գիւղերից անցել էր, երբ Միքայէլը մնացած երկու հիւրերին էլ հեռացան և նա մնաց մենակ: Նա փորձ փորձեց խկոյն պառկել և քնել, բայց չը կարողացաւ, մի հողեկան խռովու- թիւն անհանգստացնում էր նրան: Նա սկսեց լուռ- անց ու դորձ անել իր փոքրիկ սենեակի մէջ: Նրա միտքը գրգռված էր նոյն բույնում Ստեփանով այդ ոգիւնը և միջոց-ժամկալիտ պատասխան այժմ յանձն էր առել մի նպատակայաւոր ձեռնարկ- կութիւն, որին չէր կարելի չը հաւանդել: Բայց ինչու ծածուկ էր պահել իրանից, մտածում էր Միքայէլը, միթէ չէր հաւատում իրան, միթէ ինքն արժան էր նրա մտեղմութեանը: «Ոչ, ոչ, նա ս- ակի հարատ է, քան թէ կարելի էր, նա խորշում է օդնող ձեռքից, որպէս օճիք... բայց իմ վերա- բերութեանը, — դա վերադարձական է...»

(Կը շարունակվի)



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

**ՍԱԼԻՑԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՏԱՄ-ՆԱԲՈՅԺ ԲԺՇԿ Լ. Ի. ԼԻՆԵԼԻՆՅԻՄԻ ԹՊՂ ԵՆ ԱՆՈՒՄ ԲՈՒԿՆԵՐ ԲԺՇԿԵԼԵՆ ՖԼԿՈՒՆՏԻՑԻՑ: ԵՂԻ միջոցները մեծ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՆ գտել և առաջարկում են իբրև ԱՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և ատամների համար: Կարելի է ԱՏԱՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆԵԼԼՈՒՑ սառեցնում են ԼՕՐՉՈՒՆՔԻ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:**

**Ըտամնաբոյժ բժիշկ Ե. Ի. Եգեպեյի ԳԼԵՆՈՐ ՊԸՀԵՍՏԸ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒՉՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐՉ, ՍՕԿՕԼՕՎ Ի տանը:**  
**ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԵՍԵՆ և անդրկովկասեան պետաւոր ՊԸՀԵՍՏՈՒՄ: Ծախողների ՆԵՇՆԵՒՈՐ ՉԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:**

**ՉԻԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ**

**ՆՕՐՎԵԳԻԵՅԻ ՄԵՔԵԼԵՎ ՉԻԻԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի ղեղաղործ:**

**ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ**

Գիւրջի Փրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները ղրղեցին ինձ պարապել նրանց արդիւնազորութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք է և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Չիւթից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ԳԻՐՇՖԵԼԿԵՆ (ԳԻԻՕՅԻ) ՊԸՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ուսւ բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն ղէպի իմ աշխատանքը, որովհետև նորա առիթ չունեն ուսւաց փողերով պահպանել ԵՐՏԵՍԱՀՄԵՆԵՆՆ ԵՐԻԻՆՆԵՐՈՐԾՈՒԹԻՒՆԵՐ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր ղեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Լուբեանսկի ղեղատուն Ե. ի. Գիւրջեյի և Բ. Կեյեր և նկ. Նիկոլսկի վրա: Թիֆլիսում Յուրիսովի և Բուտովի ղեղատուն:

1-25

Մեր Ազգային դպրոցների Մեծապատու տեսուչներին և նոցա օգնականներին

«Աւսումն մարդն ի իր իր» վերնադրով Այրենարանի չորրորդ տարգրութիւնն սկսելուց առաջ ուզում եմ իմանալ ձեր նկատողութիւնները այդ գրքուկի մասին: Եթէ կարեւոր համարէք ինչ ինչ փոփոխութիւնների ենթարկել, յաւելուածներ և յապաւումներ անել, եւ յօժարութեամբ կը կատարեմ առանց ղիպելու բուն սկզբունքին:

Այդ գիրքն է ընդունուած մեր ազգային պետաւոր դպրոցներում թիֆլիսի ներսիւսան և Գայեանեան դպրոցներում, Նրեանայ թեմական դպրանոցում, Ալեքսանդրապօլու տղայոց և օրիորդաց դպրոցներում, Ղարաբաղու Հոգեւոր սեմինարիայում և թեմի դպրոցներում: Ինձ յայտնի է միայն միւս մանր դպրոցներից որոնցում է ընդունուած: Սակայն եւ այս ընդունելութիւնից ազահութեամբ շահուելու բարձանք չունեմ իմ միակ շահս կը լինէր այն, որ դա իւր եղանակով, բովանդակութեամբ և ղնովը համապատասխաններ այդ ընդունելութեանը, իսկ այդ վեր է միակ մի հոգու աժեց, պէտք են բարոյապէս և ընկերութեամբ օգնողներ, ահա այդ օգնութիւնն եմ եւ խնարհաբար խնդրում ձեզանից: Իմ հասցէն—Շուշի, Ղազարոս Աղայեանցին:

1-3

Շուտով կը մտնի մամուլի տակ մի ղիրք, «Ձեռնարկ Կիւրաստանութեան» անունով որ կը լինի վեց ղանազան մասերի բաժանված:

Ցանկացողներից խնդրում ենք բաժանորդ ղրվել առաջուց, որպէս ղի կարողանանք տպագրական ծախսերը հոգայ: Գրքի արժողութիւնն է 50 կ., կը վաճառվը Հայաստանում բացվող նոր ուսումնարանների օգտի համար: Ստորագրութիւնները ընդունվում են պ. Զաքարեայ Գրղորեանցի գրաստանութում, Միխայլովի կամուրջի մօտ, և Նախկին Իվանովի գրադարանում, Արժրուուու ղալլէրէյում:

2-3 Աւհան Բօտինեան

Խնդրում եմ ՎՐԱՍԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՒԻ ԹԵՄԻ Տայոց հոգեւոր ուսումնարաններին ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ հարողին ինձ թէ ինչ աւարկաների ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՐՑՈՑՈՒԹԻՒՆ ունեն, ուղարկելով մի և նոյն ժամանակ իրանց յանձնված ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՏԱՏԸ:

Թեմական Վերատեսուչ ԳԻՈՐԳ ԲԱՐԹՈՒԳԱՐԵԱՆՑ:

5-10

**ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՂ**

Տարրական Ուսուցնարան

Մարիամեան 3 ովանեան օրիորդաց ուսուցնարանում ուսումը սկսվում է սեպտեմբերի 3-ին. աշակերտուհի ընդունելը արդէն սկսված է օգոստոսի 20-ից: Այս տարի բացվում է երրորդ դասատուն, որով ընդ ամենը կը լինեն երեք դասատուն և չորս ապորաստական դասատուն:

2-3

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և ղնութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 3-ին 1879 թ:

Մանկական Պարտեղում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը: Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Ուսումնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են ղիմնիաղիաների 1 և 2-րորդ դասատունները մտնել:

Սոյօրակի, Վեխիմիսովսկայա փողոց, Իշու Ամատունու տուն, № 11.

2-4

**ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց**

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅԱՌԱՆՈՑ (Մեղստեմբերի 4-ին)	Բ.	Կ.	ՀՆՈՒՊԻՐ	ՓՈՐԻ-ԹԻՖԼԻՍԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ	Փ Օ Ս	ԲԺՇԿԱՆՈՑ	«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ		
Ոսկին (պօրեկաների)	8	17							
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1470	—							
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1250	—							
Վերջինի 5% առաջի փոխառութեան տու. 100 »	238	—							
Երկրորդ 5% միջինի »	237	—							
Մարտի կուրսը 269—	100	—							
Լծործի կուրսը Օրեսայի վրա	9	40							
Վենայի կուրսը արծէ 121 գ.	100	—							
Գարեթի բարակը . . . . .	4	80							
Աւետարանական բանկի ակցիան 200 մ.	310	—							
Փօթի թիֆլիսեան կրկաթուղու ակցիան 125 մ.	—	—							
Շարքը բրոցիւ . . . . .	7	15							
» միւս տեսակը . . . . .	7	—							
» չարք աւաղը . . . . .	5	30							
» պանդուր . . . . .	5	10							
» մաքուր վճառած . . . . .	10	—							
Բամբակը երևանու Ա. մերկայի սերմից . . . . .	8	—							
Միւս տեսակը հին սերմից . . . . .	7	40							
Բուրդը թուշի . . . . .	7	50							
» թարաքամի . . . . .	4	—							
Աւելուը Շարքայու . . . . .	2	20							
» երևանի . . . . .	—	—							
Գարին . . . . .	1	40							
Մումը ընամարի (сгар.) . . . . .	12	40							
Մետաքսը Նուխայ . . . . .	180	—							
Կախեթ ունը . . . . .	140	—							
Կոկոնը Նուխայ (բոժ.) . . . . .	50	—							
Ֆրիդոնը (լաւը) Ազուլայ . . . . .	65	—							
Կօֆէն մօկօի . . . . .	26	—							
» վեանի . . . . .	22	—							
» Մանուկիցն . . . . .	18	—							
			Վերջինի և Արտաստանից փոսքը ստացվում է թիֆլիսում ամեն օր: Բացում է արակտից երեքաբլթի, հինգաբլթի և չարաթ: Փօթի-թիֆլիսեան կրկաթուղուց ամեն օր: Նուխու արակտից չորեքաբլթի և կիրակի: Բեկիլիւշի արակտից երեքաբլթի և չարաթ:						
			ԱՆԻՐԿՈՎ ԿԱՍԵՆՆ ՄԱՆԿԱՐԱՐՉԱԿԱՆ ԳՊՐՈՑ (Վերջինի վրա № 38)						
			Նմուշականների ընդունելութիւնը ցերեկայ և գիշերայ ամեն ժամանակ, օրը 50 կօպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Աւանձին սենականութում ամիսը 30—50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնն և նրանք ընդամենում մէջ վարձը ընդհանուր սենականութում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենականութում 30 ռուբլ ամսական:						
			Երթեկի հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9 1/2 մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:						
			Տեղերի գինը՝ թիֆլիսից						
			Մշխէթ . . . . .	90	68	38			
			Գօրի . . . . .	3.20	2.40	1.33			
			Սուրճ . . . . .	5.22	3.92	2.18			
			Բիւն . . . . .	9.	6.75	3.75			
			Փօթի . . . . .	13. 1	9.75	5.42			
			ՆԱՄԱԿՆԵՐ						
			Բաց նամակ արծէ . . . . .	2					
			Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկրների ընդունել արծէ . . . . .	7					
			Ամբրիկա . . . . .	7					
			Պարակատան . . . . .	7					
			Հողկատան . . . . .	70					
			Եղպատան . . . . .	27					
			Բաց նամակ արծէ . . . . .	2					
			Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկրների ընդունել արծէ . . . . .	7					
			Ամբրիկա . . . . .	7					
			Պարակատան . . . . .	7					
			Հողկատան . . . . .	70					
			Եղպատան . . . . .	27					